ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE
ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

Հասցե՝ Չարենց 46 Email: info@aarhus.am Հեռ.՝/+37411/ 81 85 93

ՆԵՕԿ_15/08
15_04_2015

Երևանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

**Տեղեկատվության ստանալու հարցում**

**Հարգելի պարոն Մարգարյան**

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով հասարակության տեղեկացվածության աստիճանի բարձրացման անհրաժեշտությունը, ինչպես նաև Երևանի Օրհուս կենտրոնի կից ՆԵՕԿ_15/07 գրությամբ նկարագրված խնդիրը, խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

- Երևանի քաղաքապետարանը ի՞նչ ուղեցույցով և ագրոկանոններով է առաջնորդվում և ի՞նչ չափանիշների համաձայն է իրականացնում էտման, այդ թվում խորը էտման աշխատանքները: Խնդրում ենք ներկայացնել այդ կանոնների միջազգային փորձը և արդիական գիտական հիմնավորումը:
- 2015թ. քանի՞ ծառ և ի՞նչ տեսակի ծառեր են ենթարկվել խորը էտման և որքա՞ն ծառ և ի՞նչ տեսակի ծառեր սովորական էտման:
- Արդյո՞ք քաղաքապետարանը փորձարկել կամ ձեռնարկել է վնասատուների դեմ պայքարի այլ միջոցներ: (Նախկինում կիրառվել է թունաքիմիկատներով պայքարի մեթոդը, որը կիրառվել է գիշերվա ժամերին և դա արվել է առանց մարդկանց առողջությանը և շրջակա միջավայրին վնաս հասցնելու, ինչպես նաև կիրառվել են կենսաբանական միջոցներ թռչունների համար՝ տեղադրվել են թռչնաբներ, որոնք նպաստել են միջատակեր թռչունների քանակի ավելացմանը):
- 2015թ. գարնանային էտման աշխատանքների վրա, որքա՞ն գումար է ծախսել Երևանի քաղաքապետարանը, ներառյալ վառելիք և աշխատանքային ուժ:
- Ի՞նչ են արվում էտված ճյուղերը, ու՞ր են տեղափոխվում կամ ի՞նչ նպատակով են օգտագործվում: Մեր տեղեկություններով տրամադրվում են անապահով ընտանիքներին: Եթե այդ տեղեկությունը համապատասխանում է իրականությանը, խնդրում ենք ներկայացնել ընտանիքների ընտրության կարգը, օգնություն ստացած ընտանիքների քանակը:

**Կանխավ շնորհակալություն**

**Հարգանքով՝ Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող**

**Սիլվա Այվազյան**